

ՊՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅԱՍ ՕՊՏԻՄԱԼ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՌԱՋԱՐԿԻ ՇՈԿԵՐԻՆ ԳՎԱՅԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱԸ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ս. Ա. ԹԱՊԵՎՈՍՅԱՆ
ՏԱՆՏԵՍԱԳԻՒԹՈՒԹՅԱՆ ԹԵԿՄԱԺՈՒ, ԳՊԴ ԴԱՍԱՀՈՒՆ
Ն. Յ. ՕՉԱՆՅԱՆ
ԳՊԴ ՄԱՆՏԵՍԱԳԻՒԹՈՎԱԿԱՆ ՓԱԿՈՎԼՄԵՏԻ ՈՒՍԱԽՈՂ

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում զգալիորեն մեծացել է դրամավարկային քաղաքականության դերը տնտեսության պետական կարգավորման գործում: Կիրառման ճկունության և արդյունավետության շնորհիվ այսօր այն իր ուրույն տեղն ունի պետության տնտեսական լծակների շարքում և լայնորեն կիրառվում է աշխարհի շատ երկրներում որպես մակրոտնտեսական քաղաքականության հիմնական և կարևորագույն գործիք:

Դրամավարկային քաղաքականությունը նպատակ է հետապնդում անհրաժեշտ պայմաններ ապահովելու մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի համար: Վերջիններս ներառում են բազմապիսի և բազմաբնույթ ենթանապատակներ, որոնց միջև հաճախ գոյություն ունի երկխնդրանքի խնդիր (trade-off) և ընտրված թիրախների կառավարումը կարող է հանգեցնել նյուև ցուցանիշների վատթարացմանը, որոնք ոչ պակաս կարևոր են մակրոտնտեսական կայունության տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է: Այդ նպատակով Կենտրոնական բանկը 2006 թվականից որդեգրել է գնաճի նպատակադրման ռազմավարություն (Inflation Targeting Strategy), որը ենթադրում է գնաճի թիրախային միջակայքի սահմանում տնտեսության մեջ գնաճային սպասումների արդյունավետ խարսխման նպատակով: Գնաճի ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը կանխատեսում է գնաճի ցուցանիշը, այնուհետև իր գործողություններ՝ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառումը, ուղղում է նպատակային ցուցանիշից շեղման վերացմանը:¹

Գնաճի նպատակադրման պայմաններում Կենտրոնական բանկի համար կարևոր է գնաճի ցուցանիշի պահպանումը նպատակային միջակայքում: Սակայն այդպիսի քաղաքականությունը գնաճը պայմանավորող տարրեր գոր-

¹ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ, ՀՀ Կենտրոնական բանկ, 2014, էջ 5

ծոնների դեպքում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա ունենում է տարբեր ազդեցություն: Նշված հիմնախնդիրներից կարևոր է հատկապես տնտեսական աճի և գնաճի միջև երկրներանքը:

Տնտեսական աճի վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը հասկանալու համար կարևոր է գնաճը պայմանավորող գործոնների հետազոտումը: Գնաճը կարծաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածում իր վրա կրում է առաջարկի և պահանջարկի քազմաթիվ մոնետար և ոչ մոնետար գործոնների ազդեցությունը:² Պահանջակի գնաճի դեպքում գնաճի պատճառները առավելապես կառուցվածքային բնույթ ունեն՝ պայմանավորված հարկարյուցետային քաղաքականության, արտաքին պահանջարկի փոփոխություններով, որոնք որպես կանոն կրում են երկարատև և կայուն բնույթ: Այդ պատճառով Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային պայմանների խստացումը դառնում է անհրաժեշտ քայլ, քանի որ այս դեպքում բացակայում են տնտեսության հնքանակարգավորման այնպիսի մեխանիզմները, որոնք ընդունակ կլիմեփի հավասարակշռվելու պահանջակի կտրուկ փոփոխությունները: Մինչդեռ նմանօրինակ մեխանիզմներ գործում են ամբողջական առաջարկի կողմից տնտեսական հավասարակշռության խախտման դեպքում: Առաջարկի կամ ծախքային գնաճը (cost-push inflation) առաջանում է կարևոր և համապատասխան այլընտրանք չունեցող ապրանքների և ծառայությունների (ինչպիսիք են էներգակիրները և որոշ հասարակական ծառայություններ) վրա կատարված ծախքերի աճով:³ Որպես կանոն գնաճի պատճառ հանդիսացող առաջարկի շոկերն ունեն ժամանակավոր բնույթ և աստիճանաբար մարում են ժամանակի ընթացքում՝ առանց արտաքին կարգավորող միջամտության:


Գնաճի նպատակադրման պայմաններում, երբ գնաճի պահպանումը նպատակային միջակայքի սահմաններում կարևոր խնդիր է դրամավարկային քաղաքականության տեսանկյունից, թիրախային միջակայքից գնաճի շեղման ազդակներ ստանալու դեպքում Կենտրոնական բանկը պետք է ճշգրտի դրամավարկային քաղաքականությունը համապատասխան ուղղությամբ՝ գնաճի կարգավորման նպատակով: Սակայն հարկ է նկատել, որ առաջարկի շոկերի պատճառ հանդիսացող գործոնները գտնվում են դրամավարկային քաղաքականության ներգործության շրջանակներից դուրս և Կենտրոնական բանկը չունենալով ազդեցության լծակներ ամբողջական առաջարկի նկատմամբ, ա-

²Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում. արտաքսման և ճշգրտման եղանակ. ԿԲ Բանքեր, 2008 ի 1-ին եռամյակ, էջ 41

³ՀՀ ԿԲ Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2013թ. 3-րդ եռամյակ, էջ 15

ռաջարկի ցնցումներին արծագանքում է ամբողջական պահանջարկի կարգավորման միջոցով: Այս դեպքում դրամավարկային քաղաքականության արծագանքը ծախսածին գնաճին հանգեցնում է համախառն ներքին արդյունքի առավել մեծ չափերով կրծատման, քան չեզոք քաղաքականության պահպանման դեպքում:


Ենունապես՝ գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը ստիպված է արծագանքել ոչ միայն ամբողջական պահանջարկի տեղաշարժերին, այլև ամրողական առաջարկի կարծաժամկետ ցնցումներին:



Գծապատկեր 1. Տնտեսության դիմաճիկան առաջարկի գնաճի դեպքում՝ ա) ԿԲ չեզոք քաղաքականության, բ) ԿԲ զսպող քաղաքականության դեպքում

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից՝ Հայաստանի Հանրապետությունում գնաճը վերջին տարիներին դրսևորել է բարձր տատանողականություն (2006-2013 թվականներին գնաճի ցուցանիշի արծանագրված արժեքների 63.5%-ի դեպքում այն շեղվել է նպատակային միջակայքից): Սակայն հարկ է նկատել, որ դրա հիմնական պատճառը ամրողական առաջարկի հաճախակի ցնցումներն են, և գնաճի անկայունությունը հիմնականում պայմանավորված է իրական հատվածից եկող ոչ մոնետար բնույթի շոկերով, որոնց վրա Կենտրոնական բանկը չունի ազդեցության լծակներ: Մինչդեռ, քանի որ այս դեպքում գնաճը բնութագրվում է զգալի անկայունությամբ, դա կարող է բավական ծախսատար լինել տնտեսության համար:⁴

⁴ Bernanke B., Woodford M., The inflation-targeting debate, University of Chicago Press, 2004, p. 377




Գծապատկեր 2. Գնաճի փաստացի և նպատակային մակարդակները Հայաստանի Հանրապետությունում 2006-2013 թթ.⁵

Այնուամենայնիվ, մակրոտնտեսական քաղաքականության զարգացման արդի փուլում կարևորվում է գների կայունության ապահովումը որպես դրամավարկային քաղաքականության երկարաժամկետ նպատակ: Քաղաքականության նպատակի սահմանումը երկարաժամկետ հատվածի համար ունի իր առավելությունները: Նախ կարծ ժամկետում գնաճի վարքագիծը աչքի է ընկնում անկայունությամբ, իսկ դրա կայունացումը կապված է դրամավարկային քաղաքականության ուղղվածության հաճախակի փոփոխության և հասարակական մեծ ծախսերի հետ: Մյուս կողմից տնային տնտեսությունների և ձեռնարկությունների գնաճային սպասումների հիմքում առավելապես ընկած են գնաճի երկարաժամկետ միտումները և ոչ թե կարճաժամկետ տատանումները: Այսպիսի մոտեցումը դրամավարկային մարմիններին կարճաժամկետ հատվածում օժտում է դրոշակի ճկունությամբ՝ հնարավորություն տալով դրամավարկային քաղաքականության գործիքներն ու լծակներն ուղղել նաև տնտեսական քաղաքականության կարճաժամկետ նպատակների իրագործմանը:

⁵ Աղյուրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Գնաճի ուսումնափրման և դրամավարկային քաղաքականության միջազգային փորձը ցույց է տալիս, որ անցումային տնտեսություններում, որտեղ գների նակարդակը խիստ անկայուն է և սեղուային, նպատակահարմար չէ գնաճի պաշտոնական ցուցանիշը հիմք ընդունել դրամավարկային քաղաքանությանը մշակման համար: Այդ պատճառով կարևոր է, որ կենտրոնական բանկերը հետևեն բնականոն գնաճի վարքագժին, որը ցույց է տալիս գների նակարդակի երկարաժամկետ միտումները:⁶




Գծապատկեր 3.ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույթը և ծախսածին գնաճը՝ Հայաստանի Հանրապետությունում 2006-2013 թթ.⁷

Գծապատկեր 3-ում ներկայացված են գնաճի առաջարկածին քաղադրիչի (հաշվարկված որպես փաստացի) և բնականոն գնաճի ցուցանիշների տարբերությունը) և կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույթի նակարդակները 2006-2013 թվականներին: Գծապատկերից երևում է, որ գնաճի ծախսածին քաղադրիչն այդ ընթացքում բնութագրվել է զգալի անկայունությամբ՝ առանձնանալով հատկապես առաջացման և մարման կտրուկ և անկանխատելի փուլերով: Ակնհայտ է նաև առաջարկի շոկերի դրստրման ընթացքում կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույթի բարձրացման գործելակերպը՝ որպես առաջարկածին գնաճի զսպման միջոց:

⁶ Aghajanyan G., Core inflation in a small transition country: choice of optimal measures, The European Journal of Comparative Economics, Vol. 2, n. 1, 2005, p. 83

⁷ Աղյուրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ



Իրական ՀՆԱ.աճ

**Գծապատկեր 4.ՀՆԱ աճի, գնաճի և ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույթի
մակարդակները Հայաստանի Հանրապետությունում 2006-2013 թթ.⁸**

Գծապատկեր 4-ում ներկայացված է Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույթի և համախառն ներքին արդյունքի եռամսյակային իրական աճի մակարդակները 2006-2013 թվականներին, որում ակնհայտ է վերաֆինանսավորման տոկոսադրույթի երկու-երեք եռամսյակ ժամանակային լազուվ զսպող ազդեցությունը տնտեսական աճի վրա: Օրինակ՝ 2008 թվականին բարձր գնաճի ցուցանիշի պատճառով վերաֆինանսավորման տոկոսադրույթի բարձրացումը միչև 7.75%, բացասական ազդեցություն ունեցավ 2009 թվականի համախառն ներքին արդյունքի ցուցանիշի վրա՝ փոխանակ համաշխարհային ճգնաժամի պայմաններում նպաստելու տնտեսական աճին: Այնուհետև 2010 թվականի սկզբին դրամավարկային քաղաքականության տոկոսադրույթի բարձրացումը շուրջ 2%-ով հանգեցրեց հաջորդ երեք-չորս եռամսյակների ընթացքում տնտեսական աճի տեմպերի դանդաղեցման և անզամ համախառն ներքին արդյունքի բացասական ծնդրվածքի ծևավորմանը:

Դրամավարկային քաղաքականության նկարագրված գործելառքի ակնառու օրինակ է նաև 2013 թվականին ներգակիրների սակագների բարձրացման և գյուղատնտեսության ճյուղի անբարենպաստ զարգացումների արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույթի բարձրացումը 0.5 տոկոսային կետով, որն իր բացասական ազդեցությունը կունենա հաջորդ մի քանի եռամսյակների տնտեսական աճի ցուցանիշի վրա:

⁸ Աղյուրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ ամբողջական առաջարկի շոկերը հնարավոր չէ նախօրոք կամխատեսել, իսկ դրանց առաջացման և զարգացման ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույթի բարձրացումը կարող է ցանկալի արդյունք տալ միայն որոշակի ժամանակ անց, երբ ենթադրվում է, որ տվյալ շոկը կմարդի և տնտեսությունը կվերադառնա արտադրության բնական մակարդակին: Այս դեպքում ամբողջական պահանջարկի նվազումը՝ գուգակցված ամբողջական առաջարկի շոկի մարման հետ՝ կհանգեցնի գնածի տեմպերի արագ նվազմանը, արդյունքում՝ տնտեսական աճի հետ միասին նաև գնածի տատանողականության ու անկայունության մեծացմանը: Ենտևապես առաջարկի շոկերի դրսնորման ընթացքում դրամավարկային պայմանների խստացումը չի կարող հանդիսանալ քաղաքականության նախընտրելի գործելակերպ: Մինչդեռ Կենտրոնական բանկի գործողությունները կարող են ավելի արդյունավետ լինել, եթե դրանց հիմքում ընկած լինի հստակ քաղաքականության նպատակ և ոչ թե գնածի նպատակ:⁹

Առաջարկի շոկերին Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության արձագանքի գործելակերպը կարող է արդարացվել միայն այն հիմնավորմամբ, որ այդ պարագայում կազմակերպությունները փորձում են առաջարկի գնածը փոխանցել սպառողների վրա, որը գնածի սպասումների լավ խարսխված չլինելու դեպքում կարող է առաջացնել գների և աշխատավարձերի պարուրած աճ:¹⁰ Սակայն այս դեպքում հակազնաճային քաղաքականության փոխարեն արդյունավետ կարող են լինել Կենտրոնական բանկի գնածային սպասումների կառավարման միջոցով գնածի երկողորդական ագրեցությունները մեղմելու գործողությունները:

Կենտրոնական բանկի նկատմամբ հասարակության վստահությունն ու դրամավարկային քաղաքականության քափանցիկությունը, հանդիսանալով գնածի նպատակադրման ռազմավարության հիմնայունները, կարևոր նշանակություն ունեն դրամավարկային քաղաքականության նպատակների իրագործման հարցերում: Նշված պայմանների ապահովման դեպքում ծախսածին գնածի ընթացքում Կենտրոնական բանկը կարող է արդյունավետորեն կառավարել գնածային սպասումները՝ հասարակության հետ ակտիվ հաղորդակցության միջոցով: Օրինակ՝ նպատակային միջակայքից շեղման դեպքում տնտեսության մեջ գնածի պատճառների ծիշը ընկալման նպատակով Կենտրոնական բանկը կարող է հանդես գալ գնածը պայմանավորող գործունների վերաբերյալ պարզաբանումներով, իսկ գնածի ժամանակավոր արագացման

⁹ Woodford M., Inflation Targeting and Optimal Monetary Policy, Federal Reserve Bank of St. Louis Review, July/August 2004, 86 (4), p. 15

¹⁰ ՀՅ ԿԲ Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2013 թ. 3-րդ եռամյակ, էջ 15

և մոտ ապագայում գնաճի տեմպերի նվազման վերաբերյալ Կենտրոնական բանկի կանխատեսումները թույլ կտան ծևագորելու գնաճային սպասումները դրամավարկային քաղաքականության երկարաժամկետ նպատակներին համապատասխան:

Բանալի բառեր - դրամավարկային քաղաքականություն, գնաճ, մակրոտեսական քաղաքականություն, վերաֆինանսավորման տոկոսադրույթ, առաջարկի շուկ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը Հայաստանի Հանրապետությունում. արտաքսման և ճշգրտման եղանակ, ԿԲ Բանքեր, 2008թ. 1-ին եռամսյակ,
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ, ՀՀ կենտրոնական բանկ, 2014,
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2013թ. 3-րդ եռամսյակ,
4. Հայաստանի Համբասպետության կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայք - www.cba.am,
5. Bernanke B., Woodford M., The inflation-targeting debate, University of Chicago Press, 2004,
6. Aghajanyan G., Core inflation in a small transition country: choice of optimal measures, The European Journal of Comparative Economics, Vol. 2, n. 1, 2005,
7. Inflation Targeting Revised, Bank of Israel, 2007,
8. Woodford M., Inflation Targeting and Optimal Monetary Policy, Federal Reserve Bank of St. Louis *Review*, July/August 2004, 86(4):

THE OPTIMAL RESPONSE OF THE MONETARY POLICY TO SUPPLY SHOCKS UNDER INFLATION TARGETING STRATEGY

S. A. TADEVOSYAN
*PhD of Economics,
GSU Lecturer*
N. H. OHANYAN
Student of GSU Faculty of Economics

The effectiveness of tightening of monetary policy in response to aggregate supply shocks is discussed in the article. Analysis of the dynamics of the main macroeconomic

indicators in Armenia suggests that the Central bank should not react to supply shocks by raising policy interest rates because such tactics may have negative impact on key macroeconomic variables and especially on economic growth. Instead the Central bank can effectively manage inflation expectations and secondary effects of supply shocks through communication with public, outcomes of which depend on the trust of the public on the central bank and the transparency of the monetary policy.

ОПТИМАЛЬНАЯ РЕАКЦИЯ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ НА ШОКИ ПРЕДЛОЖЕНИЯ В УСЛОВИЯХ ТАРГЕТИРОВАНИЯ ИНФЛЯЦИИ

С. А. ТАДЕВОСЯН

*Кандидат экономических наук,
преподаватель ГГУ*

Н. Г. ОГАНЯН

Студент экономического факультета ГГУ

В статье рассматривается эффективность ужесточения денежно-кредитной политики в ответ на шоки совокупного предложения. Анализ динамики основных макроэкономических показателей в Армении предполагает, что Центральный банк не должен реагировать на шоки предложения повышением процентных ставок денежно-кредитной политики, поскольку такая тактика может иметь негативное влияние на основные макроэкономические показатели и в особенности на экономический рост. Центральный банк может эффективно управлять инфляционными ожиданиями и вторичными эффектами шоков предложения через общение с общественностью, последствия которого зависят от доверия общественности к Центральному банку и транспарентности денежно-кредитной политики.